

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

«Մշակ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրանյայ և Բարձրակայա փողոցն, անկիւն):
Ուրիշ քաղաքներից պէտք է գիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւնները ընդունւում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ամառային հիւրերը. — ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. «Հայ եւ և հայ պիտի մնամ». Որն է իս-
կական պատճառը. Մատենագրութիւնը. Ներքին
լուրերը. — ԲԱՍՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տե-
ղեկութիւններ. Պատերազմ. Նամակ Կիպրոսից.
Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.
— ՀԵՌԱՒԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՄԵՐ ԱՄԱՐԱՅԻՆ ՀԻՄՆԵՐԸ

Կար ժամանակ, որ մեր ուսանողութիւ-
նը ամառային արձակուրդներին մեծ թւով
վերադառնում էր հայրենիք, ցրվում գա-
ւառները, տուրքատուները խմբեր կազմում,
ձեռնարկում փողերի քաղաքների մէջ՝ բա-
րեգործական նպատակով՝ զանազան ներ-
կայացումներ, հետաքրքրում հայրենի
երկրի կեանքով, գրում թղթակցութիւն-
ներ, բարձրացնում իր ձայնը մամուլի մէջ
հասարակութեան հետաքրքրող այս և այն
հարցի մասին, ամէն քայլափոխում ցոյց
տալով փոքր ի շատէ յախշակութիւն,
երկրասարգական ոգևորութիւն...

Կար ժամանակ...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՆԻ ԲԻՒՆԻՍԻ

Կ. ՊՕԼԻՍ, յունիսի 7/19-ին

Մայրաքաղաքի մէջ այժմ ամենուրեք անհո-
նալ խառն Գերմանիոյ կայսեր Նրուսաղէմ
երթալուն վրա է: Այս մասին իմ ստացած
ստույգ տեղեկութիւններու նպատակ, կայսրը
յառաջիկայ հոկտեմբերի վերջերը Նրուսաղէմ
պիտի գտնուի, ուր, ի ներկայութեան նորին,
պիտի կատարվի բացման հանդէսը նորակառուց
եկեղեցիին՝ որ շինված է բարձրագոյն զանգա-
կատունով մը, մասնաւոր ծախքով Վիլհելմ
կայսեր: Ինչպէս լսած եմք, այս մեծակառուց
բայց ոչ—ճարտարապետական եկեղեցին՝ հայոց
և Պարսկեան Տաճարին արտաքին դրան զէմը:
Դէպի արևմտեան հարաւային կողմը կիցայ, և
գետինը՝ որուն վրա իննված է եկեղեցին, սու-
թանին կողմանէ նուրբիւր էր նախապէս ներ-
կայ կայսեր հօրը՝ Ֆրիդրիխ՝ երբ այցելութեան
գնացած էր Նրուսաղէմ:

Ընդունելութեան համար մեծ պատրաստու-
թիւններ կը տեսնուին: Եւ որովհետեւ Յոպպէի
ծովածոցը շատ փոթորկալից է, մասնաւոր այն
ժամանակներն՝ յորում կայսերական նաւերը
պիտի ժամանեն, կայսրը մտադիր է եղբր՝ Յոպ-
պէէն վեց ժամ հեռու Հայֆայի նաւահանգիստն
իջնել և հոն ցամաքն ելնելով՝ ուղղակի ճանա-
պարհաւ երթալ Նրուսաղէմ, և այն ամենին
զիւրկն միջոցն է՝ ապահովելու համար ծովէն
ցամաք ելնելու ամենամեծ դժուարութիւնները,
որ ընկալանաբար հասարակ մասկանացունքու
միայն բաժին կը մնան... Տաճկաստանի մէջ:
Պէտքով ի կուսակալութեան կողմանէ անմիջա-
կան հրամաններ տրուած են Աքեայի միւլթէ-

Բայց այդ ժամանակը կարծէք անցել և
հեռացել է ներկայից: Պէտքովստեղծի սո-
վորութիւնն է անցեալը ներկայից
գերադասել: Սակայն ինչքան էլ չը կա-
մենանք պէտքովստեղծի, բայց փաստերը
և մեր շուրջը կատարվող կենդանի իրո-
ղութիւնները ստիպում են այդպէս լինել,
և յախշակութեամբ յիշել անցեալի գե-
ղեցկութիւնները:

Ձեռք հիւրերում մեր ուսանող երիտա-
սարգութիւնը այժմ էլ վերադառնում է
հայրենիք, բայց միմայն նրա համար, որ
ամառային ամիսները անցկացնէ գլխաւոր
քաղաքներում, երթակայ քաղաքային
կեանքի՝ զուարճութեան տեսակէտից շատ
զրաւել կողմերին, հեռու գիւղական ժո-
ղովրդից և ամբողջ, որի մասին ձեռնույց
ընթացքում նա շատ է սիրում խօսել,
գատել և վճիռներ կայացնել: Զննարիւ է,
նա այժմ էլ մտնում է հասարակութեան
և կեանքի մէջ, բայց այդ հասարակու-
թիւնը և կեանքը՝ գեղեցիկ ամառանոցնե-
րի և քաղաքային կուրսերն են, ուր տե-
րում է այնքան դատարկութիւն, երիտա-
սարգական հոգու համար այնքան բխայ-
նող մթնոլորտ...

սարգին՝ որ անմիջապէս Հայֆա երկայն
Վիլհելմ կայսեր փառաւոր ընդունելութեան
համար կարևոր միջոցներն ի գործ գնելու:
Գերմանիոյ կայսրն ուրեմն Հայֆայէն՝ Նրուսա-
ղէմ երթալու համար՝ պիտի անցնի Նապաթէթ,
ձէննին և Նապոլու քաղաքներէն, հետեւաբար
այն տեղերու ճանապարհներուն շինութեանը
համար անհամար ծախքեր կը լինին և մեծ
փութաշատութիւն ցոյց կը տրուի: Նոյնպէս Ն-
րուսաղէմէ մէջ, կըստ թէ, ճանապարհներ կը
նորոգվին և խնամքի են կը շինուին՝ կայսեր եր-
թելին ու անցողաբար գերադասելու համար:
Կը հաստատեն թէ Իսթիլ քաղաքն երեք օրվան
համար միայն ընդունաբան պիտի լինի՝ Գերման-
կայսեր՝ որ այդ ժամանակամիջոցին մէջ պիտի
այցելէ Բէյրութէն, Ձիթինեայ լեռը, Յորդանան
և Քիբրոն: Այս վերջինին մէջն է Հայր Սբրա-
համու գերեզմանին (?) վրա շինված տաճկական
փառաւոր միւլթին, ուր ու է Քրիստոսէի կամ
ոչ-մասնաւորականի խաղաւ արգելեալ է մտնել:
մինչև իսկ մասկան սպանաւորներ կը լինին:
Աւստրոլի կայսեր վարձանակալ գահաժառանգ
Ռուդոլֆ իշխանն՝ Նրուսաղէմ այցելած ժամա-
նակ, փափագելով նաև այդ հետաքրքրական
տեղայն այցելութիւն մընել, սաստկապէս մերժ-
վել է տեղացի մոլեռանդ արաբներէն, մինչև
որ սուլթանին ակամօջն հասեր, և տրված իրա-
դէի մը համաձայն հազիւ կարող եղբր է ներս
մտնել՝ ընկերակցութեամբ Նրուսաղէմի փաշա-
լին: Ի հարկէ, Վիլհելմ կայսեր համար այս
դժուարութիւնները պիտի չի յարուցվին, փաս-
տի թող թէ սուլթանին ամենապիւրէն է, այլ
և ընդհանուր տաճիկ աշխարհին՝ եւրոպական
գրեթէ պաշտելի փրկիչ կայսրն է... ներկայիս
համար:

Ստույգ կերպով կը հաստատվի այն լուրը թէ
սուլթանը Գերմանիոյ կայսեր պիտի ընծայէ
Աքեայի պատուական ծովագնդն իր շրջակայ

Մեր գաւառական փողոցի կենտրոնները
մի ժամանակ սրտատրոփ սպասում էին
մայրաքաղաքներէն վերադարձող ցանկալի
հիւրերին, որոնք իրանց հետ բերում էին
թարմութիւն, նորութիւններ, ոգևորու-
թիւն, կուրս և պայքար մղելու անս-
պառ եռանդ: Իսկ այժմ՝ դրանց տեղ դա-
լիս են յոգնած, տարբեր ջահիլ, բայց
սրտով ծերացած երիտասարդներ, որոնք
շատ քիչ են հաւատում, շատ քիչ ոյժ
ունեն պայքար մղելու, յաճախ ոչինչ բանի
չեն հաւատում, և նուրբում են կամ
մանր-մունր զուարճութիւններին և կամ,
իրանց տատերի և պապերի հետեւորդ-
ութեամբ, մի գլուխ բամբասում են, դատա-
պարտում են, ոչինչ բան չեն հաւանում,
ոչ իր առաւելութիւնը չեն ընդունում,
ուրիշ խօսքով, դիմում են այն միջոցին, որ
թոյլ է անցործ մարդկանց միակ գէնքն է՝
իրանց դատարկութիւնը և ոչնչութիւնը
վարադուրեւ համար...

Բայց միթէ բացառութիւններ չը կան,
կը բացականչեն թիթված երեսով մեր ու-
սանողները կամ նրանց «բարեկիրտ» պաշտ-
պանները: Բացառութիւններ... անկաս-
կած կան. բայց զգուշ էք արդեօք, թէ
որքան խղճուկ պիտի լինի մի ամբողջ դա-
սակարգ, մի ամբողջ սերունդ, որ իրան
միթիւնքէ բացառութիւններն երբ Բա-
ցառութիւններ ընդունելը արդէն՝ ամենա-
մեծ գաղափարաւորութիւնն է:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՀԱՅ ԵՄ ԵՒ ՀԱՅ ՊԻՏԻ ՄՆԱՍ»

Ոչ, հայ չես դու, ու՛ր պոլիկ հրէայի ազնիւ,
և պէտք չէ որ ալ հայ ըլլաս դու: Սրին մէկը
օրիտ առիւր հայոց մը որ բարեպաշտական բան
մը ընել կարծեք առաջարկելով՝ քեզի որ ուրա-
նաս հայրենի հաւաքող և դաս մեր եկեղեցին,
մոռնաս անոնք որ կեանք ու անուն մը տուին
քեզի, բու խանձարուրդ օրօրեցին, մանկութիւնդ

բոլոր հոգերով՝ ուր տակաւ կը տարածվի Գեր-
ման գաղութը:

Կը լսեմք թէ Նրուսաղէմի գերմանական հիւ-
պատոս՝ բարձր գը Տիւրքոֆ՝ մօտեւր Գերմա-
նիա կուշտորի՝ Բերլին երթալու համար:

Սուլթանի անձնական քարտուղարներէն Ձէ-
վալ բէկի, իր վնասպետին կողմանէ Վեհափառ
Ձարին ըով ունեցած պաշտօնը կրետական հար-
ցի մասին, արգիւնք մը յառաջ չի բերու:

Մայրաքաղաքի մէջ պահ մը կատկաններ
չըլնեցան թէ Նորին Վեհափառ Պաշառուր Կայ-
սեր կողմանէ փոխադարձաբար սուլթանին իբրեւ
նուէր յարկված աղամանակաւու գլխով գաւազա-
նը, նեփրիկեան թանկագին անօթներն ու մե-
ծարժեք իրեղէնները ապագայ չէին թէ Ձարը,
կերպով մը, համակերպած է սուլթանին՝ ի մա-
սին Յունաստանի Գեղորդ իշխանին՝ զայն Կրե-
տէի կուսակալ չընդունելու ինչոքին մէջ, և
ուսու և թիւրք պատերազմական տուգանքի պա-
հանդման յետաձգմանը. սակայն հասարակաց
այդ կատկանները չուտով փարատեցան՝ իրաց
նախկին վիճակին շարունակելով:

Օտմանեան պանդային կողմանէ կայսերական
կառավարութեան տրուած տեղեկութեանց հա-
մաձայն հէլլէնո—թիւրք պատերազմական տու-
գանքի նախալմարձ մէկ միլիոն օսմանեան ոս-
կի, կատարված է: Միւս կողմանէ Բ. Գուռը
ձանդոց աւստրիական զեական՝ բարձր գը Կա-
լիէին, զեականական մարմնոյն իբրեւ երկցագոյ-
նին, թէ թիւրքական զօրքերն սկսած են բաժնիկ
Թեսալիայէն: Զօրքերը բաժանվեցան Թեսալիա-
յէն թէ ցամաքէն և թէ ծովով: Մովսլին ճա-
նապարհով միլիոն զօրքերուն թիւն է 80,000:
Հինգերորդ բանակի պատկանող թիւղանօթա-
ծիկ զօրքերը և երրորդ բանակի պատկանող ու
Բուլղարի պահեստի զօրքերը՝ Էլասոսայի ճամբով

ամէն խանդաղատանքներով շրջապատեցին:

Ձան ու զգուշի առաջարկ մին էր ասիկա,
որով թու սիրուղ անասանանութիւնը փորձել ու-
գեցին: Հարկաւ լացիւր շատ մը թու կուսական
անմեղ ու առանձին սննեակի մէջ, երբ պէտք
եղաւ որոշում մը տալ, ընտրութիւն մը ընել
զքեզ սիրողներուն և թու սիրածի մէջ, ու երբ-
որ ցնորակած վայրկեանի մը մէջ ձեռքի փա-
խար հայրենի յարկէն, ետիլ չի դարձար ալ, ոչ
իսկ գողունի ակնարկ մը նետեցիր կուսակալ
վախնալով որ ծերունի ու զոգոյնուն հօրդ ա-
նէճքը չը գամէ զքեզ փախուստի ու ամօթի ճամ-
բու մէջ: Վասն զի ամօթի ուղին է լքման,
ուխտադրման ուղին, որ անքան հեշտօրն սա-
հուն է ամենուրեք համար և ուր յօժարակամ նե-
տուած են:

Գու հաւատափոխութիւնը չեմ ընդունիր ես և
բոլոր ուժովս կը մերժեմ. կը մաղթելի որ իմ ե-
կեղեցիս ալ մերժէր: Մարդօրոտութեան հաշիւը,
զոր այնքան կը հարուածներ երբ ի վնաս մեզի
զործածուի, չեմ կրնար վաւերացնել երբ մեր
օգտին յարմար ըլլայ զիպուստով: Սկեղեցիս,
կուրս, և պէտք է որ իր մեծութեան մէջ զքեզ
վրդովող սիրոյ տագնապին նայի այն ներդու-
թեամբ ու գիտութեամբ, որ իր խորհրդանշաններն
են, բու հօրդ ունեւր դարձնէ զքեզ և ոչ թէ իր
գիրկը բանայ մոլորած խղճմտանքի մը որ յու-
սանատ սիրոյ մը խռովութեան մէջ հարկաւ
ինքզինքն տէրը չէ:

Թող մոլեռանդ հոգիներ թու քրիստոնեայ դառ-
նալուց վրա խնդակցին, օրագիրները տեսակ մը
ցնծութեամբ դրեն ու հրատարակեն որ դու, հայ,
առաջի օրումն հրէան, մերժեցիր հօրդ երեսը
տեսնել, երբոր անկալ թու մօտը եկա յիշեցնե-
լու քեզ թու ազգիդ ու կրօնիդ ու ընտանիքիդ
հետ ունեցած այնքան հոծ և բազմաթիւ կա-
պերդ, և համարձակեցար պոռապուստ անոր ետեւն
երբ գլխիկը հեռացաւ գնաց անիկա:

— Հայ եմ ես ու հայ պիտի մնամ:

Հայ չես դու: Գու ազգի, թու կրօնի ձեռքով,
մերժել չես ըլլար ընաւ, այլ վտարանդի, երկու
քէն ալ հաւաստարարայէն հեռու, լքուած ու դրժ-
բաղդ արարած մը պիտի ըլլաս: Անոնք որ այսօր

ցամաքէն մեկնեցան, որոնց պիտի փոխանակեն
անմիջապէս հէլլէնական զօրքերը:

Ներդու—Գէօզիկ ըով բացված բարեգործական
պաշարի վրա երեք պիտի չի խօսվէր՝ եթէ
ժամանակ-ժամանակ նուիրատուութիւններ չը լի-
նէին և այդ առիւթն Մէլիլիէի կամ Օսմանիէի
պատուանշաններ չի շնորհուէին: Բարոյովն վե-
րացական գիւտ մէ այդ պաշարի հաստատու-
թիւնն. ու՛ր կուզէ պալատին հաճելի երևնալ՝
անպատճառ կերթայ կայսրէն անգամ մը և
նուէր մ'ալ կուտայ: Մեր Օրմանեան պատ-
րիարքն ալ պակաս տեղ չի թողուց այդ մասին,
կարևոր նուէր մ'ալ ան տուաւ: Այս անգամ
լրագրաց մէջ կը կարդանք, որ սուլթանը Մէլի-
լիէի առաջին պատուանշանը շնորհեք է նորին
բարձրութեան Չարտօրիօսկի իշխանին, որ հա-
րիւր օսմանեան ոսկի շնորհած էր յիշեալ պա-
ղարին: Ի նպատակ վերաւորեալ զօրքերու և մեռ-
նող զինուորներու ընտանեայ՝ հաւաքված այդ
զրամները, որ անգլին գումարներ կը կազմեն,
անգլին զեղծումներու նշաւակ եղած են:

Այս պաղարին հնարողը՝ օսմանեան ընդհա-
նուր պարտուց վարչութեան նախկին տնօրէն-
ներէն՝ Սէլիմ Գէլիզի անուն մէկն է, որ նոր
վարչութեան կողմանէ վճարված լինելով ան-
շուշտ իր անսահման զեղծումներուն համար,
սուլթանին պաշտպանութեանը դիմած էր: Այժմ
Սէլիմ Գէլիզի իր հնարած պաղարին շնորհիւ
գործը լաւ շուկայ և աւելի պիտի շուիէ, իր վե-
հապետն ալ չափազանց զոհ է անոր հաւա-
տար իմ ծառայութիւններէն:

Պատրիարքարանի շուրջը դարձած շատ դու-
րեւ կան, թէն ընդհանրապէս դարանի կը տես-
նուին: Կը լսեմք թէ Օրմանեան պատրիարքն՝
Ալեքսանդր Եպիսկոպոսի ի Տէր անգղաւոյնալ
կաթողիկոսութեան համար, նորին գերապատ-

[illegible]

ի ամսից աւելի է, որ դոկտոր Լէպսիտսի
հաստում ունեցած որբանոցի տեսուչ զեր-
ազի պարոն Բերգմանի և ուսուցիչ Վերա-
ս պարոն Միլան Բաղդասարեանի մէջ
տխրանքն են ծագել. փոխադարձ բողբոքե-
լիցին դոկտոր Լէպսիտսին: Չը նայած որ
դո՞ւնահաղութեամբ են խօսում պ. Մ. Բաղ-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13